«Մարզային պոլիկլինիկաների եւ շտապ օգնության կայանների ֆինանսական գործունեության մոնիտորինգը»

նախնական զեկույցի ներկայացում-քննարկում

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը (ԺԱԱ) «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ եւ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում, իրականացրել է ՀՀ մարզային պոլիկլինիկաների ու շտապ օգնության կայանների ֆինանսական գործունեության մոնիտորինգ եւ հարցում այս հաստատությունների աշխատակիցների եւ պացիենտների շրջանում:

Մոնիտորինգի ընթացքում հանրապետության բոլոր մարզերում ուսումնասիրվել են մարզային 20 պոլիկլինիկա եւ 10 շտապ բուժօգնության կայանների 2013-2015 թթ. ֆինանսական փաստաթղթերը, աշխատակիցների ու շահառուների կարծիքները, պարզելու ծախսերի դինամիկան, աշխատակազմերի վերապատրաստման պրակտիկան, պացիենտների սպասարկման ոլորտում առկա խնդիրները եւ այլն:

Այժմ բոլոր մարզկենտրոններում կազմակերպվում են հիշյալ մոնիտորինգի նախնական զեկույցի քննարկումներ, որոնց նպատակն է՝ լսել շահագրգիռ կողմերի նկատառումներն ու առաջարկները, որոնք ապագայում կներառվեն վերջնական զեկույցում:

Քննարկումները տեղի են ունենում բոլոր մարզկենտրոններում ԺԱԱ հիմնած քաղաքացիական երիտասարդական կենտրոններում հետեւյալ ժամանակացույցով՝

Սեպտեմբերի 4, ժամը 11:00. **Գյումրի,** Պուշկինի 96, հեռ. 031250622
Սեպտեմբերի 4, ժամը 14:00. **Վանաձոր,** Տերյան 4/38, հեռ. 095901212
Սեպտեմբերի 5, ժամը 11:00. **Արմավիր,** Հանրապետության 3, տուն 29/5, հեռ. 098554406
Սեպտեմբերի 5, ժամը 14:30. **Աշտարակ,** Վ.Պետրոսյան 11, հեռ. 094377085
Սեպտեմբերի 6, ժամը 11:00. **Գավառ,** Սայադյան 2/1, հեռ. 091040858
Սեպտեմբերի 6, ժամը 14:30. **Եղեգնաձոր,** Նարեկացու 18ա, հեռ. 098 065 623
Սեպտեմբերի 7, ժամը 11:00. **Կապան,** Մելիք Ստեփանյան 3, 2-րդ հարկ, հեռ. 077386885, 077132461
Սեպտեմբերի 8, ժամը 11:00. **Հրազդան,** Կենտրոն թաղ., Օգոստոսի 23-ի փող., հեռ. 091156550
Սեպտեմբերի 8, ժամը 14:30. **Իջեւան,** Վալանսի 15-15/1, 4-րդ հարկ, հեռ. 098586878
Սեպտեմբերի 11, ժամը 13:00. **Արտաշատ,** Օգոստոսի 23-ի փողոց, 9 շենք, հեռ. 055404420

Հետաքրքրված անձանց մուտքն ազատ է: